

ՀոԼՆԻՍԻ 8-ից ուժի մեջ մտած սահմանափակման կանոնները

Ներածություն

Կառավարությունը միջոցներ է ձեռնարկել կորոնավիրուսի տարածումը սահմանափակելու համար:

Սահմանված կանոնները պետք է հարգել: Այդպիսով կխուսափենք հիվանդանալ կամ վարակել այլ անձանց: Ոստիկանությունը պարտավոր է վերահսկել սույն կանոնների ապահովումը:

Հիմնարար կանոններ

- Ե՞թե հիվանդ եք, մնացե՛ք տանը:
- Ձեռքերը պարբերաբար լվացե՛ք օձառով և ջրով:
- Միմյանց միջև պահպանե՛ք առնվազն 1.5 մ հեռավորություն:
- Թույլատրվում է շփվել մեկ շաբաթվա ընթացքում առավելագույնը 10 մարդու հետ: Ցանկալի է դրսում:
- Ե՞թե դուք գտնվում եք հասարակական վայրում (կայարան, շուկա, խանութ և այլն), որտեղ անհնար է պահպանել առնվազն 1,5 մ հեռավորություն, ապա խորհուրդ է տրվում կրել դիմակ:
- Միշտ դիմակ պահե՛ք ձեզ մոտ:

Ճանապարհորդել երկրի ներսում կամ սահմաններից դուրս

- Հնարավոր է մեկ կամ մի քանի օրով գնալ էքսկուրսիա Բելգիայի որևիցե մի գյուղ կամ քաղաք:
- Ե՞թե օգտվում եք հասարակական տրանսպորտից (ավտոբուս, տրամվայ կամ գնացք) և 12 տարեկանից բարձր եք, ապա կրե՛ք միաժամանակ բերանը և քիթը ծածկող դիմակ կամ շարֆ:

Կարող եք մեկնել Նիդեռլանդներ, Գերմանիա և Լյուքսեմբուրգ՝

- հարազատներին այցելելու,
- գնումներ կատարելու:



Déontologie, neutralité, secret professionnel

Սկսած հունիսի 15-ից

- Հունիսի 15-ից սկսած հնարավոր է մեկնել արտասահման:
 - Հնարավոր է ուղևորվել Եվրամիության երկրներ, ինչպես նաև Միացյալ Թագավորություն, Շվեյցարիա, Լիխտենշտեյն, Իսլանդիա և Նորվեգիա:
 - Արտերկրում սահմանված կանոններին կարող եք ծանոթանալ հետևյալ ինտերնետային կայքում՝
https://diplomatie.belgium.be/nl/Diensten/Op_reis_in_het_buitenland/reisadviezen

Աշխատանք

- Աշխատե՛ք հնարավորինս տանը:
- Ե՞թե ստիպված եք գնալ ձեր աշխատանքի վայր, ապա Ձեր գործատուից պահանջվում է ապահովել առնվազն 1,5 մ սոցիալական հեռավորության կանոնները: Ե՞թե դա կիրառելի չէ, ապա դիմե՛ք ձեր գործատուին դիմակ ստանալու համար:
- Ե՞թե ունեք հարցեր, ապա, լրացուցիչ տեղեկությունների համար, կարող եք դիմել ձեր գործատուին:

Խանութներ

- Բոլոր խանութները բաց են:
- Գիշերային խանութները բաց են մինչև առավոտյան 1-ը:
- Բացօթյա շուկաները գործում են:
- Կարող եք գնալ վարսավիրանոց կամ գեղեցկության սրահ:
 - Հանդիպման ժամը նշանակե՛ք նախօրոք:
 - Կրե՛ք դիմակ:

Սրճարանային և ռեստորանային համակարգ

- Սրճարաններն ու ռեստորանները կգործեն են մինչև առավոտյան 1-ը:
 - Խորհուրդ է տրվում ամրագրել նախօրոք:
 - Յուրաքանչյուր խմբում թուլատրվում է առավելագույնը 10 հոգի:
 - Ձեր սեղանի շուրջ մնացե՛ք նստած:

Սոցիալական շփում

- Հնարավոր է ամեն շաբաթ սերտ շփում ունենալ 10 տարբեր մարդկանց հետ:
 - Խորհուրդ է տրվում հանդիպել դրսում:
 - Եթե դա հնարավոր չէ, ապա լավ օդափոխեք տարածքը, պատուհանը բացե՛ք:
- Ցանկանու մ եք խմբակային գործունեություն ծավալել (օրինակ՝ գնալ ռեստորան կամ էքսկուրսիա, կամ ձեր տան հյուրընկալություն կազմակերպել): Այս հանդիպումները սահմանափակվում են առավելագույնը 10 անձով:

Վարժանքներ

- Թույլատրվում է սպորտային վարժանքները այլ անձանց հետ:
 - Մարզվել թույլատրվում է առավելագույնը 20 հոգանոց խմբով:
 - Պահպանե՛ք առնվազն 1.5 մ հեռավորություն նաև սպորտային մարզման ընթացքում:
 - Առանց հանդիսատեսի ներկայության:
- Մարզավել հնարավոր է ֆիթնես կենտրոնում կամ մարզական ակումբում:
- Հանդերձարանն ու ցնցուղները մնում են փակ:
- Լողավազանները, սաունաները և բարեկեցության կենտրոնները նույնպես մնում են փակ:

Սկսած հուլիսի 1-ից

- Հուլիսի 1-ից սկսած հնարավոր է մարզվել առավելագույնը 50 հոգու մասնակցությամբ:
- Թույլատրվում է հանդիսատեսի ներկայությունը:
 - Հանդիսատեսի քանակը սահմանափակվում է առավելագույնը 200 անձով:
Պահանջվում է մնալ նստած:
 - Պահպանե՛ք առնվազն 1,5 մ հեռավորություն:

Մշակույթ

Գրադարանները բաց են:

Սկսած հուլիսի 1-ից

- Հնարավոր է գնալ թատրոն, կինոթատրոն կամ համերգ:



Déontologie, neutralité, secret professionnel

- Առավելագույնը 200 անձի ներկայությամբ և բոլորը նստած:
- Պահպանել առնվազն 1,5 մ հեռավորություն:
- Խորհուրդ է տրվում տոմսը ձեռք բերել նախապես՝ հեռախոսով կամ առցանց:
- Հնարավոր է այցելել զվարճանքի պուրակ կամ փակ խաղահրապարակ:
- Թույլատրվում է մանկական ճամփարների կազմակերպումը:

Սկսած օգոստոսի 1-ից

- Մկրտության տոնակատարությունները և զվարճահանդեսները թույլատրվում են:

Ի՞նչը դեռ չի թույլատրվում

- Պարատները (դիսկոտեկները) կամ գիշերային ակումբները դեռ չեն կարող գործել:
- Չի թույլատրվում մեծ մաշտաբի միջոցառումները (օրինակ՝ փառատոները):

Կրոն

- Կրոնական պաշտամունքի արարողությունները կարող են վերսկսվել:
 - Առավելագույնը 100 հոգու մասնակցությամբ: Հուլիսի 1-ից սկսած մասնակիցների քանակը կընդլայնվի 200-ի:
 - Ցանկացած ֆիզիկական շփում արգելվում է:

Մանկամտություն և դպրոցներ

- Մանկամտությունները բաց են:
- Միջնակարգ և ավագ դպրոցի աշակերտները, մանկապարտեզի սաները կվերսկսեն դպրոցը և մանկապարտեզը:.
- Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ դպրոցական հաստատությունից:

Խրախուսում

Այս սահմանափակումները կարևոր են հանրային առողջության համար: Ակնկալվում է բոլորի ողջամտությունը: Շնորհակալություն մասնակցության համար: Կորոնավիրուսին կհաղթենք համատեղ պայքարով: